ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

Ֆ. Թ. Մահեսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՄԱՍԻՆ

Հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի պրոբլեմները մարքսիստական քաղաքատնտեսության կարևորագույն պրոբլեմներից են։ Դրանցով է պայմանավորվում հասարակական վերարտադրության զարգացման տեմպերի և աշխատավորության նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման ընդհանուր բնութագիրը։

Հայտնի է, որ մինչև վերջին ժամանակներս հասարակական արդյունքը և ազգային եկամուտը հաշվարկվում և պլանավորվում էր միայն ամբողջապես վերցրած ՍՍՌՄ մասշտաբով։ Ներկայումս, երբ միութենական ռեսպուբլիկաները իրականացնում են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի կառավարման կարևոր ֆունկցիաները, պրակտիկ կերպով պլանավորում են իրենց տերիտորիայի ամբողջ տնտեսությունը, շատ կարևոր տեսական ու գործնական նշանակություն ունի հասարակական արդյունքի և ազգային եկամտի հաշվարկումը նաև միութենական ռեսպուբլիկաների և առանձին տնտեսական շրջանների կտրվածքով։ Այն հնարավորություն է տալիս որոշելու նրանցից յուրաքանչյուրի ազգային եկամտի աճման տեմպերը և նրա տեսակարար կշիռը ամբողջ երկրի ազգային եկամտի արտադրության մեջ. տնտեսական զարգացման տեսակետից համեմատության մեջ դնելու առանձին ռեսպուբլիկաները և տնտեսական շրջանները, որոշելու նրանցից յուրաքանչյուրի արտադրության ճյուղային կառուցվածքը։

Միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների ազգային եկամտի ծավալի և աշխատանքային ռեսուրսների ցուցանիշների համեմատությունը ցույց կտա աշխատանքի արտադրողականության մակարդակը և կապիտալ ներդրումների էֆեկտիվության աստիճանը նրանցից յուրաքանչյուրում։ Հասարակական արդյունքի և ազգային եկամտի հաշվարկումը տերիտորիալ կտրվածքով միաժամանակ նպաստում է պլանային աշխատանքների բարելավմանը։

Միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների հասարակական արդյունքի և ազգային եկամտի ցուցանիշները հաշվարկվում են սկսած 1957 թվականից։ Այդ աշխատանքները հանդիսանում են տերիտորիալ կտրվածքով ժողովրդական տնտեսության բալանսի հաշվարկման խոշոր քայլեր։

Միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների հասարակական արդյունքը և ազգային եկամուտը ներկայումս որոշվում է արտադրական մեթոդով։ Այս մեթոդով հաշվարկված ազգային եկամուտը իրենից ներկայացնում է նյութական արտադրության ճյուղերի զուտ արտադրանքի գումարը, իսկ զուտ արտադրանքը հանդիսանում է համախառն արտադրանքի և

նյութական ծախսերի տարբերությունը։ Այս է ազգային եկամտի հաշվարկման հիմնական մեթոդը։

Արտադրական մեթոդով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Հայկական ՍՍՌ ազգային եկամուտը աճում է բացառիկ արագ տեմպերով, որը երևում է № 1 աղյուսակի տվյալներից։

Աղյուսակ 1[1]

ՀՍՍՌ հասարակական արդյունքի և ազգային եկամտի աճը։ (Տոկոսներով 1955 թ. նկատմամբ)

	1955 թ.	1956 թ.	1957 թ.	1958 թ.	1959 թ.	1960 թ.	1961 թ.
Հասարակական արդյունք . .	100	108,0	113,7	128,7	142,0	156,6	176,0
Ազգային եկամուտ . . .	100	109,0	115,0	132,9	142,9	158,5	181,6

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի միջին տարեկան աճը կազմեց 9,9 տոկոս, իսկ ազգային եկամտինը՝ 10,4 տոկոս։

Չնայած այդ փաստերին, վերջերս մի շարք տնտեսագետներ ելնելով այն բանից, որ ընդլայնված վերարտադրության պայմաններում հասարակական ամբողջական արդյունքի կազմում ավելանում է արտադրության միջոցների տեսակարար կշիռը, այն կարծիքն են արտահայտում, որ հասարակական արդյունքը աճում է ավելի բարձր տեմպերով, քան ազգային եկամուտը, որ համախառն արտադրանքը աճում է ավելի արագ, քան զուտ արտադրանքը։

Այդ տնտեսագետների կարծիքի հետ համաձայնվել չի կարելի։ Բանը նրանումն է, որ արտադրության միջոցների արագ զարգացման հետ միաժամանակ բարձրանում է նրանց օգտագործման էֆեկտիվությունը, որի շնորհիվ ավելանում է սարքավորման յուրաքանչյուր միավորի հաշվով թողարկվող արտադրանքի չափը։ Դրա փայլուն ապացույցը հանդիսանում է այն, որ արտադրանքի թողարկումը աճում է ավելի արագ, քան հիմնական ֆոնդերը։ Այսպես, եթե 1928 թվականից մինչև 1959 թվականը ընկած ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ի հասարակական ամբողջական արդյունքի ծավալը աճել է 18 անգամ, ապա արտադրական հիմնական ֆոնդերի ծավալը այդ նույն ժամանակաշրջանում աճել է ընդամենը 7,3 անգամ։ Բացի այդ, տեխնիկայի զարգացումը և արտադրության տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործումը տանում է դեպի արտադրվող արտադրանքի մեկ միավորի վրա կատարվող նյութական ծախսերի կրճատումը։

Ճիշտ է, արտադրության առանձին ճյուղերում տեխնիկայի զարգացումը կարող է որոշ ժամանակամիջոցում հանգեցնել ամորտիզացիայի բացարձակ չափերի մեծացմանը արտադրանքի մեկ միավորի մեջ։ Բայց արտադրության ճյուղերի մեծ մասում, հիմնական ֆոնդերի ամորտիզացիան արտադրանքի մեկ միավորի մեջ, գնալով կրճատվում է, չնայած նրա տեսակարար կշիռը նյութական ծախսերի մեջ աստիճանաբար մեծանում է։

[1] Այս աղյուսակում բերված և մյուս թվական տվյալները վերցված են ՀՍՍՌ Կենտ. Վիճ. վարչության համապատասխան հաշվետվություններից։

Այսպիսով, տեխնիկական պրոգրեսի և աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով կրճատվում են արտադրության նյութական ծախսերը, որը հանդիսանում է հասարակական ամբողջական արդյունքի աճման համեմատությամբ, ազգային եկամտի աճման ավելի բարձր տեմպերի ապահովման վճռական և որոշիչ գործոնը։

Հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի դինամիկայի փոխհարաբերության վրա իր ազդեցությունն է թողնում նաև արտադրության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները։ Այսպես, եթե հասարակական արտադրության մեջ ավելի արագ են զարգանում այն ճյուղերը, որտեղ զուտ արտադրանքը ավելի մեծ տեսակարար կշիռ ունի, ապա մյուս բոլոր հավասար պայմանների դեպքում զուտ արտադրանքի աճման տեմպերը առաջ կանցնեն համախառն արտադրանքի աճման տեմպերից, հետևապես ազգային եկամուտը կաճի ավելի արագ, քան հասարակական ամբողջական արդյունքը։ Իսկ եթե արտադրության կառուցվածքը փոփոխվի այնպես, որ նրա մեջ բարձրանա արտադրության այն ճյուղերի տեսակարար կշիռը, որոնց նյութատարողությունը ավելի բարձր է, ապա զուտ արտադրանքի աճման տեմպերը ոչ միայն չեն կարող առաջ անցնել համախառն արտադրանքի աճման տեմպերից, այլև կարող են ետ մնալ նրանցից։

Հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի դինամիկայի փոխհարաբերության վրա իր ազդեցությունն է թողնում նաև նյութական ծախսերի կրկնակի հաշվարկման էլեմենտների տեսակարար կշռի բարձրացումը, որը հետևանք է աշխատանքի հասարակական բաժանման խորացմանը։ Տեխնիկայի զարգացման հետևանքով ստեղծվում են արտադրության նոր ճյուղեր։ Ձեռնարկությունների մասնագիտացումը, արտադրանքի առանձին մասերի արտադրության վրա, ուժեղացնում է ձեռնարկությունների կոոպերացումը, որով պայմանավորվում է արտադրության միջոցների շրջանառության արագացումը արտադրության առանձին ճյուղերի և ձեռնարկությունների միջև։ Այս բոլորը հանգեցնում է այն բանին, որ համախառն արտադրանքի մեջ սկսում է բարձրանալ նյութական ծախսերի կրկնակի հաշվարկման էլեմենտների տեսակարար կշիռը։ Նյութական ծախսերի կրկնակի հաշվարկման հետևանքով համախառն արտադրանքի կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները արտահայտվում են համախառն արտադրանքի դինամիկայում, իսկ զուտ արտադրանքի աճման տեմպերի վրա նրանք ոչ մի ազդեցություն չեն թողնում։

ՀՍՍՌ ազգային եկամտի աճման տեմպերը գրեթե համընկնում են ՍՍՌՄ ազգային եկամտի աճման տեմպերին։ Այսպես, ՍՍՌՄ ազգային եկամուտը 1955—1960 թթ. աճեց 55,2 տոկոսով, իսկ ՀՍՍՌ ազգային եկամուտը՝ 58,5 տոկոսով։ Այսպիսով, ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ ՀՍՍՌ ազգային եկամուտը նշված ժամանակաշրջանում աճեց ավելի քան 1,5 անգամ։

Ռեսպուբլիկայի ազգային եկամտի աճման տեմպերը նկատելիորեն գերազանցում են նրա բնակչության աճման տեմպերին, որը հանդիսանում է բնակչության նյութական բարեկեցության բարձրացման վառ արտահայտություններից մեկը։ Այսպես, եթե 1958—1961 թթ. Հայաստանի բնակչության միջին տարեկան թիվն աճել էր 11,1 տոկոսով, ապա ազգային եկամուտը աճել էր 36,6 տոկոսով։ Այլ կերպ ասած ազգային եկամտի աճման տեմպերը գերազանցել են բնակչության աճման տեմպերին 25,5 տոկոսով։ Սա նշա-

նակում է, որ բարձր տեմպերով է աճում նաև ազգային եկամտի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բնակչության մեկ շնչի հաշվով ռեսպուբլիկայի հասարակական արդյունքը աճել է 23,9 տոկոսով, իսկ ազգային եկամուտը՝ 24,4 տոկոսով։ Ընդ որում բնակչության մեկ շնչին ընկնող հասարակական արդյունքի միջին տարեկան աճը կազմել է 7,4 տոկոս, իսկ ազգային եկամտինը՝ 7,5 տոկոս։

Հատկանշական է այն փաստը, որ հասարակական արդյունքը և ազգային եկամուտը արագ տեմպերով են աճում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Ընդ որում ավելի արագ տեմպերով է աճում արդյունաբերության, շինարարության ու տրանսպորտի արտադրանքը։ Այդ ցույց տալու համար բերված է № 2 աղյուսակը։

Աղյուսակ 2

Հայկական ՍՍՌ հասարակական արդյունքի և ազգային եկամտի աճը. ըստ նյութական արտադրության առանձին ճյուղերի (ներառյալ շրջանառության հարկը)

	1961 թվականը տոկոսներով 1958 թվականի նկատմամբ	
	Հասարակական արդյունք	Ազգային եկամուտ
1. Արդյունաբերություն	136,6	138,5
2. Շինարարություն	160,5	147,5
3. Գյուղատնտեսություն	102,5	102,4
4. Տրանսպորտ և կապ	202,8	241,5
5. Առևտուր	128,1	124,6
6. Նյութատեխնիկական մատակարարում	321,9	362,4
7. Մթերումներ	164,8	169,6
8. Անտառային տնտեսություն	73,7	50,0
9. Այլ ճյուղեր	93,1	79,2
Ընդամենը	136,8	136,6

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հասարակական արդյունքի աճման միջին տարեկան տեմպերը կազմել են. արդյունաբերության մեջ՝ 10,9 տոկոս, շինարարության մեջ— 17,1 տոկոս և տրանսպորտի մեջ— 26,6 տոկոս։ Ազգային եկամտի աճման միջին տարեկան տեմպերը համապատասխանաբար կազմել են 11,5 տոկոս, 13,8 տոկոս և 34,1 տոկոս։

Ազգային եկամուտը որպես հասարակական ամբողջական արդյունքի բաղկացուցիչ մաս ստեղծվում է նյութական արտադրության ճյուղերում զբաղված աշխատողների աշխատանքով։ Հետևաբար, նրա ծավալը կախված է նյութական արտադրության ոլորտում զբաղված աշխատողների քանակից և նրանց աշխատանքի արտադրողականության մակարդակից։

1961 թվականին 1958 թվականի համեմատությամբ ռեսպուբլիկայի ազգային եկամուտը աճեց 36,6 տոկոսով։ Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, գրեթե 80 տոկոսը տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին, իսկ մնացած 20 տոկոսը՝ բանվոր ծառայողների թվաքանակի ավելացման հաշվին։ Հետևաբար ազգային եկամտի աճման հիմնական գործոնը աշխատանքի արտադրողականության բարձրացումն է։

Հասարակական արդյունքի և ազգային եկամտի աճը ցուցակցվում է

ճյուղային կառուցվածքի փոփոխումով։ Ընդ որում բնորոշ է մնում այն փաստը, որ գնալով բարձրանում է արդյունաբերության տեսակարար կշիռը, որը երևում է № 3 աղյուսակից։

Աղյուսակ 3

Հայկական ՍՍՌ հասարակական արդյունքի և ազգային եկամտի ճյուղային կառուցվածքը փաստացի դներով, ներառյալ շրջանառության հարկը (տոկոսներով ընդամենի նկատմամբ)

	Հասարակական արդյունք		Ազգային եկամուտ	
	1958 թ.	1961 թ.	1958 թ.	1961 թ.
Ընդամենը	100	100	100	100
այդ թվում՝				
1. Արդյունաբերություն	62,5	68,3	52,4	58,0
2. Շինարարություն	10,9	12,1	10,7	11,9
3. Գյուղատնտեսություն	20,5	13,6	27,8	20,9
4. Տրանսպորտ և կապ	1,5	2,2	1,6	2,7
5. Առևտուր	2,6	2,1	4,2	3,4
6. Նյութատեխնիկական մատակարարում	0,3	0,3	0,5	0,7
7. Մթերումներ	0,7	0,7	1,3	1,5
8. Անտառային տնտեսություն	0,1	0,1	0,2	0,1
9. Այլ ճյուղեր	0,9	0.6	1,3	0,8

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի ծավալի մեջ աճել է արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի տեսակարար կշիռը և դրան հակառակ կրճատվել գյուղատնտեսության, առևտրի և նյութական արտադրության այլ ճյուղերի տեսակարար կշիռը։

Եթե նկատի ունենանք, որ արդյունաբերությունը շինարարության և տրանսպորտի հետ միասին տալիս է ռեսպուբլիկայի ազգային եկամտի մոտ 3/4 մասը (1961 թ. 72,6 տոկոս), ապա միանգամայն ակնհայտ կդառնա, թե ինչպիսի զարգացած ինդուստրիալ երկիր է հանդիսանում Սովետական Հայաստանը։

Այնուհետև, ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, արդյունաբերության տեսակարար կշիռը ազգային եկամտի արտադրության մեջ ավելի ցածր է, քան հասարակական արդյունքի մեջ, իսկ գյուղատնտեսությանն՝ ընդհակառակը։ Սա բացատրվում է նրանով, որ արդյունաբերությունը պատկանում է նյութական արտադրության այն ճյուղերի թվին, որտեղ զուտ արտադրանքի տեսակարար կշիռը համախառն արտադրանքի մեջ համեմատաբար ավելի ցածր է, քան նյութա-արտադրական ծախսերի տեսակարար կշիռը, իսկ գյուղատնտեսությունն ընդհակառակը։

Այս բոլորի հետ միաժամանակ պետք է նշել, որ գների և գնագոյացման ներկայումս գործող սիստեմի պայմաններում նյութական արտադրության մի շարք ճյուղերում (ծանր արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ) արտադրված արտադրանքի արժեքի մի մասը իրացվում է ոչ թե այդ ճյուղերի արտադրանքի գների մեջ, այլ ժողովրդական տնտեսության այլ բնագավառների գների մեջ, գլխավորապես շրջանառության հարկի ձևով։ Այս հանգամանքը անշուշտ փոքրացնում է վերը թվարկած ճյուղերի

տեսակարար կշիռը հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության մեջ և դրան հակառակ մեծացնում է արդյունաբերության տեսակարար կշիռը։

Ելնելով գնագոյացման գործող սիստեմի ունեցած թերություններից, սովետական տնտեսագետների մեծ մասը, միաձայն իրավացիորեն, առաջարկում է վերանայել այդ սիստեմը։ Գործող գնագոյացման պրակտիկան պետք է կատարելագործվի այնպես, որ գները ավելի ճիշտ արտահայտեն թողարկված արտադրանքների արժեքը։ Արտադրանքի գների մոտեցումը իրենց արժեքին ունի շատ կարևոր, պրակտիկ նշանակություն։ Բանը նրանումն է, որ գնագոյացման գործող սիստեմը թուլացնում է տնտհաշվարկի հիմքերը, քանի որ այն խեղաթյուրում է արտադրանքի միավորի արտադրության վրա կատարված ծախսերի իրական կառուցվածքը։ Իսկ արտադրանքի գների մոտեցումը իրենց արժեքին կստեղծի անհրաժեշտ պայմաններ ծախսերի ճիշտ կալկուլացիայի և բոլոր ձեռնարկությունների շահութաբեր աշխատանքի համար։

Մեկ աշխատողին ընկնող համախառն և զուտ արտադրանքի արտադրության տեսակետից, ռեսպուբլիկայի նյութական արտադրության բոլոր ճյուղերի մեջ արդյունաբերությունը գրավում է առաջին տեղը։ Այսպես, օրինակ՝ 1961 թվականին արդյունաբերության մեջ մեկ աշխատողի հաշվով արտադրված համախառն արտադրանքը 2,2 անգամ ավելի է, քան շինարարության մեջ և 9,6 անգամ ավելի, քան գյուղատնտեսության մեջ։ Իսկ եթե վերցնենք նոր ստեղծված արժեքի գումարի տեսակետից, ապա արդյունաբերության մեջ յուրաքանչյուր աշխատողին ընկնում է 1,8 անգամ ավելի արտադրանք, քան շինարարության մեջ և 5,9 անգամ ավելի, քան գյուղատնտեսության մեջ։

Լենինյան ազգային քաղաքականության և արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման սկզբունքի անշեղ կիրառման հետևանքով ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի կառուցվածքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Հայտնի է, որ նախահեղափոխական Հայաստանի էկոնոմիկայում գլխավոր և վճռական տեղը պատկանել է գյուղատնտեսությանը։ Բավական է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թվականին 1926/27 թթ. անփոփոխ գներով կազմել է 65,8 միլ. ռուբլի, իսկ արդյունաբերությանը՝ ընդամենը 49 միլ. ռուբլի։ Բնակչության ավելի քան 90 տոկոսը ապրում էր գյուղերում։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի արդյունաբերությունը աճեց այնպիսի տեմպերով, որպիսին հայտնի չի եղել Հայաստանի տնտեսական զարգացման բազմադարյան պատմությանը։ Ներկայումս ռեսպուբլիկայում գործում են ավելի քան 500 խոշոր և միջին կարողության արդյունաբերական ձեռնարկություններ։ 1961 թ. Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ ավելացավ 75 անգամ։ Ներկայումս ռեսպուբլիկայի արդյունաբերությունը 5 օրում արտադրում է այնքան արտադրանք, որքան արտադրել է նախահեղափոխական Հայաստանի արդյունաբերությունը ամբողջ 1913 թվականի ընթացքում։ Եթե 1913 թ. Հայաստանի խոշոր արդյունաբերության մեջ աշխատում էր ընդամենը 5 հազար մարդ, ապա ներկայումս աշխատում է մոտ 160 հազար մարդ։

Անցած 42 տարիների ընթացքում ռեսպուբլիկայում ստեղծվեցին և լայն զարգացում ստացան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որպիսիք բոլորովին գոյություն չեն ունեցել նախառևոլյուցիոն Հայաստանում։ Արդյունաբերության այդ ճյուղերի թվին են պատկանում մեքենաշինությունը, հատկապես էլեկտրատեխնիկական, հաստոցաշինությունը, սարքաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի, ապակու, ճենապակու և հախճապակու, ինչպես նաև թեթև և սննդի արդյունաբերության շատ ճյուղեր, հատկապես գործվածքեղենի, տրիկոտաժեղենի, հրուշակեղենի և մի շարք այլ ճյուղեր։ Հետաքրքրական է նշել, որ սովետական վիճակագրության մեջ արդյունաբերությունը բաժանվում է 13 խոշոր ճյուղերի և դրանցից 11-ը այս կամ այն չափ գոյություն ունի Հայաստանում։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման տեմպերը նկատելիորեն գերազանցել են ՍՍՌՄ արդյունաբերության զարգացման տեմպերին, չնայած նրան, որ Սովետական Միության արդյունաբերության զարգացումը ամբողջապես վերցրած տեղի է ունեցել աշխարհում չգերազանցված տեմպերով։ Եթե ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը 1960 թվականին 1913 թվականի համեմատությամբ աճեց 40 անգամ, ապա Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերության համախառն արտադրանքը, այդ նույն ժամանակամիջոցում աճեց 68 անգամ։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում ոչ միայն ստեղծվեցին, այլև զարգացման համեմատաբար ավելի բարձր տեմպեր ստացան ծանր արդյունաբերության ճյուղերը։ Այսպես, օրինակ, եթե 1961 թվականին 1940 թվականի համեմատությամբ թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 6 անգամ, իսկ սննդարդյունաբերությանը՝ 3 անգամ, ապա մեքենաշինության և մետաղամշակության արտադրանքը այդ նույն ժամանակաշրջանում աճեց 62 անգամ, շինանյութերի արդյունաբերությանը՝ 22 անգամ և այլն։ Արդյունաբերության արագ զարգացման հետևանքով փոխվեց նյութական արտադրության ճյուղերի փոխհարաբերությունը։ Ներկայումս ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ գլխավոր և վճռական տեղը պատկանում է արդյունաբերությանը։ Ռեսպուբլիկայի հասարակական ամբողջական արդյունքի 2/3 մասից և ազգային եկամտի կեսից ավելին ստեղծվում է արդյունաբերության մեջ։ 1961 թ. նյութական արտադրության ոլորտում զբաղված աշխատողների թվի 26,7 տոկոսը աշխատում էր արդյունաբերության մեջ։

Արդյունաբերության արագ զարգացումը միաժամանակ անհրաժեշտ պայմաններ ստեղծեց ռեսպուբլիկայի նյութական արտադրության մյուս ճյուղերի, մասնավորապես գյուղատնտեսության, կապիտալ շինարարության և տրանսպորտի զարգացման համար։ Չնայած գյուղատնտեսության տեսակարար կշռի իջնելուն, ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության մեջ, Սովետական իշխանության տարիներին նրա զարգացումը հասավ բարձր մակարդակի։ Այսպես՝ գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները 1960 թվականին նախառևոլյուցիոն 1913 թվականի համեմատությամբ աճեց 20 տոկոսով, այդ թվում տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները 33 տոկոսով, կարտոֆիլի և բանջարանոցային կուլտուրաներինը՝ ավելի քան երկու անգամ, իսկ կերային

կուլտուրաներինը՝ ավելի քան 30 անգամ։ Այդ նույն ժամանակաշրջանում խաղողի այգիների տարածությունը ռեսպուբլիկայում ավելացավ 3,4 անգամ, իսկ պտղատու այգիներինը՝ 5,4 անգամ։ 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ ոչխարների և այծերի գլխաքանակը նախառևոլյուցիոն 1916 թվականի համեմատությամբ աճեց 65 տոկոսով, խոզերի գլխաքանակը — ավելի քան 7 անգամ, նկատելիորեն ավելացավ նաև կովերի գլխաքանակը։

Հայտնի է, որ նախառևոլյուցիոն Հայաստանում գյուղացիության հողերը օգտագործվում էին խիստ էքստենսիվ։ Յանքերի ընդհանուր տարածության 89,2 տոկոսը զբաղեցվում էր հացահատիկներով, 5,9 տոկոսը տեխնիկական կուլտուրաներով, 3,6 տոկոսը բանջարա-բոստանային և 1,3 տոկոսը կերային կուլտուրաներով։ Չրասակավության, գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի և ագրոտեխնիկայի ծայր աստիճան ցածր լինելու հետևանքով չափազանց ցածր էր մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Բավական է նշել, որ բամբակի միջին բերքատվությունը մեկ հեկտարից 1913 թ. կազմել է՝ 8,8 ցենտներ, հացահատիկներինը՝ 5,6 ցենտներ, իսկ կարտոֆիլինը՝ 68 ցենտներ։

Սովետական իշխանության տարիներին, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, սովխոզների և կոլտնտեսությունների վերելքը ժամանակակից գյուղատնտեսական բարդ մեքենաներով ու սարքավորումներով, արտադրության մեջ առաջավոր ագրոտեխնիկայի արմատավորումը հնարավորություն տվեց խիստ կերպով բարձրացնելու գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Այսպես՝ 1960 թվականին 1913 թվականի համեմատությամբ հացահատիկային կուլտուրաների մեկ հեկտարի միջին բերքատվությունը աճեց 91 տոկոսով, բամբակինը՝ ավելի քան 3 անգամ, կարտոֆիլինը՝ մոտ երկու անգամ և այլն։ Մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման և նրանց բերքատվության բարձրացման հետևանքով խիստ կերպով ավելացավ նրանց համախառն բերքը։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը զարգացման մեծ թափ ստացավ հատկապես ՍՄԿՊ կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան պլենումից հետո ընկած ժամանակաշրջանում։ Վեր հանելով սոցիալիստական գյուղատնտեսության մեջ մինչ այդ տեղ գտած թերությունները, պարտիան և սովետական կառավարությունը մշակեցին և կենսագործեցին պատմական նշանակություն ունեցող մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք հիրավի ռևոլյուցիոն նշանակություն ունեցան գյուղատնտեսության վերելքի և ընդհանրապես ամբողջ էկոնոմիկայի զարգացման համար։ 1960 թ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համախառն արտադրանքը (1958 թ. համադրելի գներով) նախառևոլյուցիոն 1913 թվականի համեմատությամբ ավելացել է 3,8 անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ 1,9 անգամ։ ՍՍՌՄ գյուղատնտեսության համախառն արտադրանքը այդ նույն ժամանակաշրջանում համապատասխանաբար ավելացել է 2,24 և 1,6 անգամ։ Ինչպես տեսնում ենք, ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճման տեմպերը նկատելիորեն գերազանցում են ՍՍՌՄ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճման տեմպերին։ Սակայն միջին հաշվով գյուղական բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական մթերքների արտադրության մակար-

դակի տեսակետից ՀՍՍՌ-ն չափազանց ետ է մնում ՍՍՌՄ-ից։ Այսպես, եթե 1959 թվականին ՀՍՍՌ-ում գյուղական բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվել է 270 ռուբլու գյուղատնտեսական մթերքներ, ապա ՍՍՌՄ-ում արտադրվել է 432 ռուբլու։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին չափերի այսպիսի խիստ տարբերությունը հիմնականում բացատրվում է ռեսպուբլիկայի գյուղական բնակչության բարձր խտությամբ։

Պետք է նշել, որ գյուղատնտեսության համախառն և զուտ արտադրանքի աճման տեմպերը դեռևս բավական ետ են մնում արդյունաբերության համախառն և զուտ արտադրանքի աճման տեմպերից։ Բավական է նշել, որ եթե արդյունաբերության զուտ արտադրանքի միջին տարեկան աճը 1957—1960 թվականը ընկած ժամանակաշրջանում կազմեց 12 տոկոս, ապա գյուղատնտեսության զուտ արտադրանքի միջին տարեկան աճը այդ նույն ժամանակաշրջանում կազմեց 2 տոկոս։ Այս է պատճառը, որ ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության մեջ տարեցտարի աճում է արդյունաբերության տեսակարար կշիռը և դրան հակառակ կրճատվում է գյուղատնտեսության տեսակարար կշիռը։

Հայկական ՍՍՌ նյութական արտադրության ճյուղերի, մասնավորապես արդյունաբերության և գյուղատնտեսության, արագ զարգացումը արդյունք էր այն խոշոր կապիտալ ներդրումների, որոնք կատարվեցին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ։

Անցած 42 տարիների ընթացքում միայն պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից կատարված կապիտալ ներդրումները ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կազմեցին ավելի քան 2 միլիարդ ռուբլի։ Բացի դրանից, գյուղատնտեսության, կուլտուր-կենցաղային և բնակարանային շինարարության ասպարեզում խոշոր կապիտալ ներդրումներ են կատարել նաև ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները։

Շինարարության զարգացման ներկա էտապին ամենից առաջ բնորոշ է պետական կապիտալ ներդրումների չտեսնված աճ։ Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ վերջին երեք տարիների ընթացքում (1959—1961 թթ.) պետական կապիտալ ներդրումների ծավալը ռեսպուբլիկայում նախորդ 3 տարիների համեմատությամբ աճեց 68,1 տոկոսով, այդ թվում շինարարա-մոնտաժային աշխատանքների ծավալը 57,9 տոկոսով։ Շնորհիվ շինարարական աշխատանքների այսպիսի ծավալի, անցած 3 տարիների ընթացքում (1959—1961 թթ.) ռեսպուբլիկայում կառուցվել և շահագործման են հանձնվել մոտ 70 մեծ ու փոքր արդյունաբերական ձեռնարկություններ։ Բավական ընդլայնվել է գործող ձեռնարկությունների արտադրական կարողությունները։ Շարք են մտել ջրատնտեսական շինարարության մի քանի խոշոր կառույցներ, որոնց շնորհիվ ռեսպուբլիկայի ոռոգելի հողերի տարածությունն ավելացել է ավելի քան 15 հազար հեկտարով, կառուցվել և շահագործման է հանձնվել 1.258 հազ. մետր ընդհանուր տարածությամբ բնակելի շենքեր, 121 դպրոցներ և առողջապահական ու կուլտ-կենցաղային նշանակություն ունեցող բազմաթիվ շենքեր։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում բուռն զարգացում ստացան տրանսպորտը, կապը, առևտուրը և նյութական արտադրության մյուս ճյուղերը։ Աճել և կատարելագործվել է երկաթուղային տրանսպորտի գծային տնտեսությունը, փոխվել է քարշի տեսակները և շարժակա-

կազմը, մեքենայացվել են բեռնման և բեռնաթափման աշխատանքները։ Ստեղծվել է բարձր աստիճանի զարգացած օդային և ավտոմոբիլային տրանսպորտ։ Արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության զարգացման բազայի վրա անընդհատ ավելանում է տրանսպորտի բոլոր տեսակների բեռնաշրջանառությունը։ Ձեռնարկություններում արտադրական նպատակներով մեծ չափերով օգտագործվում են կապի միջոցները։ Քաղաքներում և գյուղերում ստեղծվել է առևտրական կազմակերպությունների լայն ցանց։ Այս բոլորի հետևանքով տարեցտարի աճում է նշված ճյուղերում ստեղծվող հասարակական արդյունքը և ազգային եկամուտը։

Ինչպես ՍՍՌՄ, նույնպես էլ ՀՍՍՌ հասարակական արդյունքի և ազգային եկամտի ճնշող մասը ստեղծվում է ժողովրդական տնտեսության համայնացված սեկտորում։ Աղյուսակ № 4-ում բերված են տվյալներ, որոնք բնութագրում են ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի կառուցվածքը տնտեսության սոցիալական ձևերի կտրվածքով։

Աղյուսակ 4

Հայկական ՍՍՌ հասարակական արդյունքի և ազգային եկամտի կառուցվածքը տնտեսության սոցիալական ձևերի կտրվածքով 1958 և 1961 թթ. (տոկոսներով ընդամենի նկատմամբ)

	Հասարակական արդյունք		Ազգային եկամուտ	
	1958 թ.	1961 թ.	1958 թ.	1961 թ.
Ընդամենը (ներառյալ շրջանառության հարկը)	100	100	100	100
այդ թվում՝				
1. Պետական ձեռնարկություններ (ներառյալ շրջանառության հարկը)	74,5	82,8	68,2	76,6
2. Կոոպերատիվ ձեռնարկություններ (ներառյալ շրջանառության հարկը)	3,5	1,3	3,5	1,7
3. Կոլտնտեսություններ	13,4	8,9	15,5	11,7
4. Կոլտնտեսականների անձնական օժանդակ տնտեսություններ	7,4	4,9	9,8	7,2
5. Բանվոր-ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններ	2,2	2,1	3,0	2,8

№ 4 աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ 1961 թ. ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի 93 և ազգային եկամտի 90 տոկոսը ստեղծվել է պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում ու կոլտնտեսություններում։ Այնուհետև, ինչպես ցույց են տալիս տվյալները, տարեցտարի կրճատվում է բնակչության տնտեսությունների տեսակարար կշիռը ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության մեջ։ Այսպես, եթե 1958 թ. նրա տեսակարար կշիռը ռեսպուբլիկայի հասարակական արդյունքի մեջ կազմել է 9,6 տոկոս, իսկ ազգային եկամտի մեջ 12,8 տոկոս, ապա 1961 թ. այն համապատասխանաբար կազմեց 7 տոկոս և 10 տոկոս։ Այս երևույթը միանգամայն օրինաչափ է, պետական ձեռնարկությունների և կոլտնտեսային հանրային տնտեսությունների զարգացումով, բնակչության օժանդակ տնտեսությունների դերն ու նշանակությունը որպես եկամուտների աղբյուր ընկնում է։

Հասարակական արդյունքի և ազգային եկամտի ավելացմանը մեծ չա-

փերով նպաստում է արտադրական պլանների կատարումն ու գերակատարումը։ Արտադրական պլանների կատարումն է, որ ապահովում է նախատեսված ծավալով արդյունքի ստացումը։ Արտադրական ծրագրի գերակատարումը ժողովրդական տնտեսությանը տալիս է մեծ ծավալի հասնող համախառն ու զուտ արտադրանք։ Հետևաբար նյութական արտադրության բոլոր ճյուղերի ձեռնարկությունների աշխատանքում տեղ գտած թերությունների վերացումը, ներարտադրական ռեզերվների հայտնաբերումը և լրիվ օգտագործումը հանդիսանում է արտադրության աճման կարևոր աղբյուրներից մեկը։

ՀՍՍՌ Մինիստրների սովետին ենթակա արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք տալիս են ռեսպուբլիկայի արդյունաբերության ամբողջ արտադրանքի 99 տոկոսից ավելին, զգալի չափով գերակատարեցին յոթնամյակի առաջին երեք տարվա պլանային առաջադրանքները և պլանից դուրս երկրին տվեցին 140 միլիոն ռուբլու արդյունաբերական արտադրանք, որը 10 անգամ ավելի է նախահեղափոխյան Հայաստանի արդյունաբերության 1913 թ. թողարկած արտադրանքից։ Անցած երեք տարիների ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալը աճեց 39 տոկոսով, յոթնամյա պլանի կոնտրոլ թվերով նախատեսված 32 տոկոսի փոխարեն։

Այս բոլորի հետ միասին պետք է նշել, որ ամբողջապես վերցրած ռեսպուբլիկայի տնտեսության առանձին ճյուղերի աշխատանքներում դեռևս գոյություն ունեն էական թերություններ, որոնց լիկվիդացումը ավելի նշանակալից կդարձներ ռեսպուբլիկայի նվաճումները հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի արտադրության ավելացման գործում։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության բնագավառի ամենախոշոր թերություններից մեկն այն է, որ դեռևս զգալի թվով արդյունաբերական ձեռնարկություններ չեն կատարում իրենց արտադրական պլանները։ Այսպես՝ 1958 թվականին համախառն արտադրանքի տարեկան պլանը չկատարեցին Ժողտնտխորհի ամբողջ ձեռնարկությունների 3,1 տոկոսը (6 ձեռնարկություն), 1959 թվականին՝ 7 տոկոսը (16 ձեռնարկություն), 1960 թվականին՝ 12,2 տոկոսը (31 ձեռնարկություն), իսկ 1961 թվականին՝ 19,2 տոկոսը (51 ձեռնարկություն)։ Պլանները թերակատարելու պատճառով այդ ձեռնարկությունները համապատասխանաբար չտվեցին 543 հազ. ռուբլու, 2.908 հազ. ռուբ., 10.676 հազ. ռուբլու և 18.662 հազ. ռուբլու արտադրանք։

Արտադրական ծրագրի թերակատարման պատճառները բազմազան են, սակայն նրանցից երկուսը ամենակարևորներն են։ Առաջինը՝ դա աշխատանքի վատ կազմակերպումն է, իսկ երկրորդը նյութատեխնիկական վատ մատակարարումը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ ձեռնարկությունների արտադրական պլանների թերակատարումը հիմնականում այդ երկու պատճառների արդյունքն է։ Գաղտնիք չէ, որ շատ տնտեսական շրջաններ և արդյունաբերական ձեռնարկություններ, ելնելով նեղ գերատեսչական շահերից, թերակատարում են կոոպերացված մատակարարումների պլանները և դրանով իսկ ձախողում մյուս տնտեսական շրջանների և արդյունաբերական ձեռնարկությունների պլանների կատարումը։

Արտադրական ծրագրի թերակատարման հիմնական պատճառներից մեկն էլ ռիթմիկ արտադրության կազմակերպման բացակայությունն է։ Շատ ձեռնարկություններում արտադրանքի թողարկումը դեռևս տեղի է ունենում անհավասարաչափ կերպով։ Բավական է նշել, որ միայն Վ. Ի. Լենինի անվան

Հայէլեկտրագործարանը 1961 թ. ամբողջ ապրանքային արտադրանքի 14,6 տոկոսը թողարկել է բոլոր ամիսների առաջին տասնօրյակում, 28,6 տոկոսը երկրորդ տասնօրյակում, իսկ 56,8 տոկոսը երրորդ տասնօրյակում։

Արտադրական պլանների թերակատարման հիմնական պատճառներից մեկն էլ հանդիսանում է այն, որ ՀՍՍՌ Ժողտնտխորհը, նրա ճյուղային վարչությունները, մինիստրությունները ու գերատեսչությունները գեռ բավարար կերպով չեն ղեկավարում ձեռնարկությունները, վատ են ուսումնասիրում ետ մնալու պատճառները, խոր չեն վերլուծում արտադրության տեխնոլոգիական ցուցանիշները և չեն ձեռնարկում անհրաժեշտ միջոցառումներ ետ մնացող ձեռնարկությունների աշխատանքում տեղ գտած թերությունները վերացնելու և նրանց առաջավորների մակարդակին հասցնելու համար։

Խոշոր թերություններ գոյություն ունեն ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպությունների աշխատանքում։ Բավական է նշել, որ վերջին վեց տարիների ընթացքում (1956—1961 թթ.) ոչ մի անգամ չի կատարվել շինարարական աշխատանքների պլանները։ Կապիտալ շինարարության պետական պլանային առաջադրանքները թերակատարելու պատճառով, նշված ժամանակաշրջանում, այդ կազմակերպությունները չկարողացան իրացնել ավելի քան 20 միլիոն ռուբլու միջոցներ։ Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ միջոցները իրացնելու դեպքում շինարարության զուտ արտադրանքը, նույն ժամանակաշրջանում, կավելանար մոտ 9,5 միլ. ռուբլով։

Կապիտալ ներդրումների տնտեսական էֆեկտիվության բարձրացման և աղգային եկամտի ավելացման համար շատ կարևոր նշանակություն ունի շինարարության տեմպերի արագացումը։ Շինարարության ժամկետների կրճատումը մի կողմից արագացնում է կառուցվող օբյեկտների շահագործման հանձնելու պրոցեսը, և դրանով իսկ պայմաններ ստեղծում նյութական արտադրության մյուս ճյուղերի արտադրանքի ավելացման համար, մյուս կողմից՝ այն հնարավորություն է տալիս կրճատելու շինարարության ծախսերը և դրանով ավելացնելու շինարարության զուտ արտադրանքը։ Սակայն ռեսպուբլիկայում տարիներ շարունակ ձախողվում է արտադրական կարողությունների շահագործման հանձնելու պլանները։ Բավական է նշել, որ միայն Ժողտնտխորհի սիստեմում 1961 թ. պլանով նախատեսված 90 օբյեկտներից շահագործման հանձնվեց միայն 60 օբյեկտ։ Արտադրական կարողությունները ժամանակին շահագործման չհանձնելու հետևանքով, վերջին երեք տարիների ընթացքում սկսեց արագորեն աճել անավարտ շինարարությունը։ Այսպես, միայն Ժողտնտխորհի սիստեմում անավարտ շինարարության մնացորդը 1959 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմեց 50,7 միլիոն ռուբլի, 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 65,2 միլիոն, իսկ 1961 թ. հունվարի 1-ին՝ 84,2 միլիոն ռուբլի։

Կապիտալ շինարարության, մասնավորապես արտադրական կարողությունների գործարկման, պլանների թերակատարման հիմնական պատճառներից մեկն այն է, որ ռեսպուբլիկայի շինարարության ինդուստրիալ բազան դեռևս շարունակում է ետ մնալ կապիտալ շինարարության ծավալի աճման տեմպերից։ Յոթնամյա պլանով նախատեսված է այս ասպարեզում կապիտալ ներդրումների ծավալը հասցնել 92 միլ. ռուբլու։ Ճիշտ է, անցած երեք տարիների ընթացքում՝ 1959—1961 թթ. կառուցվեցին և գործարկվեցին շինարարական նյութերի արտադրության և շինարարական ինդուստրիայի 20 նոր

ձեռնարկություններ, սակայն այս նպատակին հատկացված միջոցները իրացվում են շատ անբավարար կերպով։

Արտադրական հարդությունների գործարկման պլանների թերակատարումն արդյունք է նաև կապիտալ ներդրումների փոշիացմանը բազմաթիվ կառույցների և օբյեկտների վրա։ Այսպես, օրինակ, 1962 թվականին Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատի կառուցվող 26 օբյեկտներից 10-ի շինարարությունը սկսված է 1959 թվականից, իսկ 9-ի շինարարությունը՝ 1961 թվականից։ Այս նշանակում է, որ կոմբինատը դեռ չավարտած կառուցվող օբյեկտների շինարարություններ, ձեռնամուխ է եղել բոլորովին նոր օբյեկտների կառուցմանը։ Կապիտալ ներդրումների փոշիացումը նպաստում է անավարտ շինարարության մասշտաբների մեծացմանը, հետևապես առանձին օբյեկտների կոնսերվացմանը։

Արտադրական կարողությունների գործարկման պլանների թերակատարումը արդյունք է նաև այն բանի, որ կապիտալ ներդրման պլանները հաճախ չի համաձայնեցվում, չի կապակցվում արտադրական կարողությունների շահագործման հանձնելու առաջադրանքների հետ, մասնավորապես սարքավորումների ձեռք բերման պլանների հետ։

Շինարարական աշխատանքների անբավարար ընթացքի և արտադրական կարողությունների գործարկման պլանների թերակատարման հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ շինարարական կազմակերպությունները ժամանակին չեն կենտրոնացնում շահագործման հանձնվող օբյեկտներում անհրաժեշտ քանակի բանվորական ուժ և նյութական ռեսուրսներ, վատ են օգտագործում շինարարական մեխանիզմներն ու տրանսպորտային միջոցները, լավ չեն կազմակերպում աշխատանքը, որի հետևանքով որոշ կառույցներում ցածր է պետական ու աշխատանքային կարգապահությունը։

Զգալի մեծ են ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համախառն և զուտ արտադրանքի ավելացման հնարավորությունները։ Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման, հետևապես համախառն և զուտ արտադրանքի աճի ամենակարևոր նախապայմաններից մեկը հանդիսանում է հողային տարածությունների ռացիոնալ օգտագործումը։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսական ձեռնարկությունները կենսագործելով գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ պարտիայի ու կառավարության որոշումները, վերջին տարիների ընթացքում, ձեռք բերեցին զգալի հաջողություններ՝ 100 հեկտար հողատարածության հաշվով գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու գործում։ 1961 թ. միջին հաշվով յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության դիմաց նրանք արտադրեցին միս, կենդանի քաշով, 36 ցենտներ՝ 1953 թ. 23 ցենտների դիմաց, կաթ՝ 146 ցենտներ, 68 ցենտների դիմաց, բուրդ՝ 226 կգ., 156 կգ դիմաց, իսկ 100 հեկտար հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության դիմաց արտադրեցին ձու 20 հազար հատ, 1953 թ. 2 հազարի դիմաց։ Ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների դրամական եկամուտները 100 հեկտար հողատարածության հաշվով կազմեց՝ 1960 թ. 9.792 ռուբլի, իսկ 1961 թ. 10.852 ռուբլի, բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքը համապատասխանաբար կազմեց 14.228 և 13.980 ռուբլի։

Այս բոլորի հետ միաժամանակ պետք է նշել, որ ռեսպուբլիկայի շատ

կոլտնտեսություններ և սովխոզներ դեռևս ռացիոնալ կերպով չեն օգտագործում իրենց հողային տարածությունները, որի հետևանքով ստանում են քիչ արտադրանք։

Շամշադինի և Իջևանի շրջանների կոլտնտեսությունները գտնվում են գրեթե միևնույն հողակլիմայական պայմաններում, սակայն 1961 թ. յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության հաշվով արտադրված գյուղատնտեսական մթերքների արժեքը Շամշադինի շրջանի կոլտնտեսություններում կազմեց 22.588 ռուբլի, իսկ Իջևանի շրջանի կոլտնտեսություններում՝ 12.503 ռուբլի։ Սա նշանակում է, որ Շամշադինի շրջանի կոլտնտեսությունները ավելի ռացիոնալ կերպով են օգտագործել իրենց հողային տարածությունները, քան Իջևանի շրջանի կոլտնտեսությունները։

Զգալի թերություններ գոյություն ունեն նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ձեռնարկությունների աշխատանքներում։ Շատ տրանսպորտային ու առևտրական կազմակերպություններ դեռևս շարունակում են թերակատարել արտադրական պլանները։ Դրա հետևանքով անբավարար են օգտագործվում արտադրանքի թողարկման ավելացման հնարավորությունները։

Այդ նշանակում է, որ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ճյուղերում դեռևս հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության ավելացման ռեզերվները օգտագործվում են անբավարար։ Հաշվարկները ցույց են տալիս, որ որոշ արդյունաբերական ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների կողմից արտադրական պլանների թերակատարման հետևանքով 1961 թ. ռեսպուբլիկան մոտ 11 միլիոն ռուբլու պակաս ազգային եկամուտ ստացավ։ Հետևաբար, խնդիրը կայանում է այդ ռեզերվների հայտնաբերման ու օգտագործման մեջ։